վորութեան իրաւունքի մէջ։ Այն բոլոր ընծաները, որ տանում է հարսնացուն, դառնում է նրա անձնական սեփականութիւն և կոչւում է շատ բնորոշ անունով՝ *արնագին*, այսինքն իւր սեփական մարմնի, իւր արեան գինը։ Ուրեմն այդ ընծաները մի տեսակ հատուցումն են, մի տեսակ գին կորցրած կուսութեան համար։ Շատ պարզ է, որ արնագինը հռովմէական antiferna-յի նման, իբրև հեռանք երեսաց տեսոյի հայրն նման նուիրատուութիւնների, երբեմն հնում ծաղկող գնման գործողութիւնից մնացած մի հետք է։

VI.

Բայի վերև նկարագրած հարսանեկան սովորութիւններից, որոնք իրենց վրայ կրում են հարսի գնման որոշ հետքերը, մի քանի հայկական գաւառներում իրականութեան մէջ, տակաւին մեր օրերում, կարելի է հանդիպել, թէ ինչպէս ամուսնութեան հարցում միշտ հանդէս են գալիս հարսի վաճառքի ու գնման սովորութեան գործողութիւնները։ Թէև այդ գնումը տեղ տեղ մի տեսակ այլափոխուած է, բայց և այնպէս որոշակի աչքի է զարնում իւր առանձնայատուկ գծերով, որոնք միանգամայն կարող են տեղի ունենալ լոկ առևտրական բնաւորութիւն ունեցող գաշինքների մէջ։

Բաւական է միայն նկատի առնել այն հայեացքը, որ մեր ժողովուրդն ունի դէպի կինը, և մեզ պարզ կլինի, թէ ինչպէս պէտք է վարուին ամուսնութեան հարցում։ «Աղջիկն օտարի ապրանք է» կամ «աղջիկը ծախու ապրանք է»—ահա այն առածները, որոնք միշտ հնչում են մեր ժողովրդի բերանում և տիպում ըստ այնմ էլ իրագործել իւր հայեացքները։ Բուլանըխում հարսնացուի համար ժողովուրդն միշտ ասում է. «Աղջիկը թաշկինակ մ'է, որ պէտք է ձգել ձեռաց վրայ», և կամ նշանադրութեան ժամանակ բարեմաղթում են՝ «խէր տեսնես քո բազարից